Բողոքական աշխարհից.

Бирж. Вѣд. դեկտ. 22-ի համարի մէջ կարդում ենք.

Պրուսիայում այժմս տեղի ունի բողոքականների շարժումն դպրոցական օրինագծի դէմ, որ պրուսական կառավարութիւնը առաջարկել է ազգային ժողովին (Լանդտագին): Ազատամիտ շրջանների դժգոհութիւն յարուցանող գլխաւոր կէտերն են 18 և 9 դ պարագրաֆները: Նրանցից առաջինով ուսուցիչը պէտք է լինի այն դաւանութեան, ինչ դաւանութեան որ պատկանում է աշակերտների մեծ մասը: Եթէ աշակերտների 2/3-դ մասը բողոքական են, այդ դէպքում ուսուցիչն էլ պէտք է բողոքական լինի, իսկ եթէ 2/3 կաթոլիկ են, ուսուցիչը պէտք է լինի կաթոլիկ: Իսկ 9 դ յօդուածը համայնքներից խլում է ուսուցիչներ նշանակելու իրաւունքը և տալիս այն հոգևորականութեան ներկայացուցիչներին և կառավարութիւնից նշանակուած տեսչութեան: Ինքն ըստ ինքեան պարզ է, որ այդ օրինագիծը ժողովրդական դպրոցը կը դարձնի կրօնական պրօպագանդի կեդրոն և կառավարութեան կողմից այդ առաջարկը լինում է ի հաճոյս կեդրոնի (պահպանողականների), «որը վճռական կուսակցութիւն է» բայխստագում և այդ կուսակցութեան աջակցութիւնը ներկայումս կառավարութեան համար հարկաւոր է մի շարք օրինագծեր անցկացնելու համար. օրինակ նաւատորմի ուժեղացման մասին և այլն: Կառավարութեան կարծիքով երկրի կուլտուրական զարգացման շահերը կարելի է զոհ բերել համաշխարհային քաղաքականութեան: Կեդրոնի ազդեցութիւնն այժմս այնքան մեծ է Գերմանիայում, որ քիչ ժամանակ առաջ չէր կարելի կասկածել, որ այդ օրինագիծը՝ հակառակ իւր յետադիմութեան, չի անցնիլ: Իսկ այժմս անընդհատ աճող ընդհանուր դժգոհութեան շնորհիւ, այդ օրինագծի ելքն արդէն կասկածից դուրս է: Օրինակ. Բերլինում տեղի ունեցաւ պրուսական ուսուցիչների համաժողով, որը ամենակարուկ կերպով կարծիք յայտնեց ընդդէմ դաւանական դպրոցի և յօդուտ կառավարութեան ծրագրի ձայն տուին մի միայն չորս հոգի: Համաժողովը նոյնպիսի մեծամասնութեամբ կարծիք յայտնեց և դպրոցական վարչութեանց կղերականացման մասին: Նման վճիռներ ընդունեց և պրուսական վարժուհիների համաժողովը: Այս յունվարին Բերլին պէտք է հաւաքուին նաև քաղաքների ներկայացուցիչներ, որոնք ուզում են բողոքել այդ օրինագծի դէմ: Գաւառական քաղաքներում նոյնպիսի ժողովներ տեղի ունին և եթէ այդ ձևով շարունակ

աճելու լինի դժգոհութիւնը, կառավարութիւնը ստիպուած կլինի յետ վերցնել իւր յետադիմական օրինագիծը:

Տաճկական կեանքից.

Церк. Вѣст.-ի № 46-ում կարդում ենք.—

Տաճկաստանում վերջին ժամանակներս առաջ եկան շատ նշանաւոր ներքին դէպքեր, որոնք մեծ վտանգ են սպառնում քրիստոնեայ աշխարհին: Համիսլամականութեան արբանեակը— ահա այդ ապագայ սարսափներով հարուստ շարժման բնորոշ անունը: Ներկայ սուլթան Աբդուլ Համիդի սիստեմատիքական գործունէութեան շնորհիւ, որը ձգտում է վերածնել և միացնել մահմէդական ազգերը «Աստուծոյ փոխանորդի» դրօշակի տակ. ռուսական պետական կազմի խախտման, արևմտեան Եւրոպայի հոյանաւոր վարմունքի շնորհիւ համիսլամականութիւնը զարթեց իւր երկարատև քնից և գաղտնի սրում է իւր սուսերը քրիստոնէից դէմ և պատրաստում յաղթական արշաւանքի ընդդէմ քրիստոնէութեան, ինչպէս այդ տեղի ունեցաւ բիւզանդական կայսրութեան դէմ միջին դարերում կատարուած տարերային արշաւանքի ժամանակ: Արդէն արտայայտւում է այդ արթնացման արդիւնքը հայերի և բուլղարների կոտորածով, որը տաճկաց կառավարութեան կողմից հետևողական մի փորձ է քրիստոնեաներին զրկելու այն իրաւունքներից, որոնցով նրանք օգտուել են բիւզանդական կայսրութեան անկման օրից: Helinisme թերթը, որ արթուն աչքով հսկում է քրիստոնէից շահերի պաշտպանութեանը արևելքում, հաստատելով համիսլամականութեան արթնանալը, նախազգուշացնում է գալիք վտանգից:

«Ռուսական բանակի և նաւատորմի անսպասելի պարտութիւնները ասիական պետութիւնից, ասում է նա, որ հաղորդւում էր այստեղ, բորբոքեցին մուսուլմանների տաք երևակայութիւնը և վերածնեցին ամբողջ մահմէդական աշխարհի աշխարհակալական ոգին: Քաղաքակիրթ մարդկութեան սպառնացող դեղին վտանգին միանում է՝ նրանից ոչ պակաս սարսափելի կանաչ վտանգը հոգևոր միևնոյն կանաչ դրօշակի տակ համախմբուող 300 միլլիոն մահմէդականներից: Այժմս կասկած չկայ, որ կը զօրանայ համիսլամականութեան Ասիայի և Աֆրիկայի քարոզիչների եռանդը՝ իրենց օջախ Ստամբուլի հետ միասին»: